«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի ուսուցումը

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Հերիքնազ Կարապետյան

Դպրոց՝ Երևանի հ.186 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

ԳԼՈՒԽ 1 ԿԱՊ: ԿԱՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

1.1. Կապը որպես խոսքի մաս, նրա տեսակները, կազմությունը և ուղղագրությունը……..……5

1.2. Կապերի հոլովառությունը, կետադրությունը……..……....7

ԳԼՈՒԽ 2 ՇԱՂԿԱՊ: ՇԱՂԿԱՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

2.1. Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները……9

2.2. Շաղկապների կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը……..11

Գործնական աշխատանք……13

Սահիկաշար……14

Եզրակացություն……..15

Օգտագործված գրականության ցանկ……16

Ներածություն

Աշակերտի մտավոր, հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ գործունեությունը մեծապես պայմանավորված է մայրենի լեզվի հիմնավոր ուսուցմամբ: Լեզվի միջոցով է, որ արտաքին աշխարհի բազմապիսի երևույթների մասին աշակերտները ստանում են համապատասխան ինֆորմացիա և արտահայտում իրենց մտքերն ու զգացմունքները:

Մայրենի լեզվի ուսուցիչների առջև խնդիր է դրվում՝ զարգացնել աշակերտների պատկերավոր մտածողությունը, նրանց մեջ մշակել երևույթների գեղարվեստական ընկալման ու վերարտադրման հմտություններ՝ հարստացնելով նրանց բառապաշարը մասնագիտական բառերով ու տերմիններով:

Լեզվի ուսուցման առաջնահերթ խնդիրներից մեկն էլ այն է, որ ուսուցման ընթացքում աշակերտները գիտակցեն լեզվի համակարգայնությունը, այն դիտեն որպես միմյանց հաջորդող մակարդակների կառուցվածք, հասկանան, որ լեզվի, ինչպես նաև ամեն մի օբյեկտիվ երևույթի մեջ չկան կամայականություններ, որ լեզուն հասարակական կյանքի օրինաչափ երևույթ է: Լեզվական միավորների ու մակարդակների կապն այնքան սերտ է, որ խոսողից պահանջվում է իմանալ լեզվական համակարգն ամբողջովին, այլապես լիարժեք ու անթերի խոսք կառուցել հնարավոր չէ:

Այսպիսով՝ լեզվի ուսուցումը պահանջում է համակողմանի մոտեցում: Լեզվական մի երևույթ չի ըմբռնվի, եթե այն իմաստավորվի նախադասության կամ խոսքի մեջ, չհամեմատվի լեզվական այլ երևույթների հետ: Օրինակ՝ գոյականի հոլովման քերականական կարգի ուսուցումը նախադասություններից դուրս կդառնա անիմաստ, որովհետև բառակապակցության կամ նախադասության մեջ է, որ հոլովված բառը ձեռք է բերում քերականական պաշտոն: Նույնը և ածականը, թվականը, դերանունը, մակբայը, բայը, առավել ևս՝ <u>կապն ու շաղկապը</u>:

Քերականության ուսուցումը մեծապես նպաստում է աշակերտների մտավոր կարողությունների զարգացմանը և օգնում խոսքի գիտակցված յուրացմանը: Երբ աշակերտը նախադասության մեջ կարողանում է ճանաչել ու խմբավորել բառերը ըստ խոսքի մասերի, որոշել նրանց քերականական հատկանիշները, շարահյուսական պաշտոնները, ինչպես նախադասության բնույթը, դրանով իսկ նա կատարում է բարդ ու լուրջ աշխատանք:

Հայերենի քերականական արտահայտման միջոցներից են կապերն ու շաղկապները, որոնք մեր լեզվում նույնքան հաճախ են հանդես գալիս, որքան քերականական ամենագործածական այլ կարգերը:

Որքան հարուստ է աշակերտների բառապաշարը և դրան զուգընթաց՝ մշակված կապակցման միջոցներին տիրապետելու և կենդանի խոսքում դրանք կիրառելու հմտությունները, այնքան զարգացած է նրա խոսքը:

Քերականական խոսքի մասերի ուսումնասիրությանը տարբեր ժամանակաշրջաններում անդրադարձել են մի շարք լեզվաբաններ՝ Հ. Աճառյան,Մ. Ասատրյան, Ս. Աբրահամյան, Գ. Գարեգինյան և այլք: Քերականական խոսքի մասեր են կապը և շաղկապը: Չնայած որոշակի աղերսներին՝ դրանք չի կարելի նույնացնել, քանի որ դրանց միջև կան իմաստային և կիրառական զգալի տարբերություններ: Կապերը, հանդես գալով որպես առանձին, ինքնուրույն բառային միավորներ, զուրկ են նյութական նշանակությունից, արտահայտում են սոսկ քերականական իմաստ և կատարում են շարահյուսական դեր՝ դրսևորելով ստորադաս բառերի՝ գերադասների նկատմամբ ունեցած զանազան հարաբերությունները 1 : Ի տարբերություն կապերի՝ շաղկապները ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման դեր չունեն: Պարզ նախադասության մեջ դրանց դերը հիմնականում նախադասության համազոր անդամներ կապելն է, իսկ բարդ նախադասության մեջ արտահայտում են բաղադրիչների ամենաբազմազան ու տարբեր համադասական ու ստորադասական հարաբերություններ: Քերականական խոսքի մասերի ուսուցումը հիմնական դպրոցում կարևոր նշանակություն ունի: Եթե շաղկապների ուսուցումը սկսվում է դեռևս ցածր դասարաններից, ապա կապին 8-րդ դասարանում սովորողները հաղորդակից են դառնում առաջին անգամ: Առաջանում են որոշակի դժվարություններ հատկապես կապերի հոլովառությունն ուսումնասիրելիս, ուստի այստեղ ևս առաջնային է դառնում ուսուցչի դերը: Բացի այդ կապի և շաղկապի ուսումնասիրությունը 8-րդ դասարանում պետք է հիմնավոր լինի՝ հետագայում նպաստելով նաև բարդ նախադասությունների ուսումնասիրությանը: Մեր աշխատանքում առանձին գլուխներով կներկայացնենք կապի և շաղկապի ուսուցումը՝ անդրադառնալով տեսակներին, ուղղագրությանն ու կետադրությանը, կապերի հոլովառությանը, գործածությանը:

---

1 Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977, էջ 254:

ԳԼՈՒԽ 1 ԿԱՊ: ԿԱՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

1.1. Կապը որպես խոսքի մաս, նրա տեսակները, կազմությունը և ուղղագրությունը:

Ինչպես արդեն նշել ենք , կապի ուսուցումը դպրոցում էական նշանակություն ունի, քանի որ այն նպաստում է ինքնուրույն գրավոր և բանավոր խոսքի ճիշտ կառուցմանը, հաղորդակցման գործընթացում դրանց ճիշտ գործածությանը: Այս խոսքի մասը առաջին անգամ կապ է անվանել նշանավոր լեզվաբան Մ. Աբեղյանը: Այդ անունը ճշտորեն արտահայտում է այս խոսքի մասի քերականական հատկանիշը, այն է՝բառերն իրար հետ կապելու ունակությունը:
Մինչ այդ այն անվանվել է նախադրություն : Ըստ լեզվաբան Մ. Ասատրյանի՝ այս եզրույթը գրաբարի համար ճիշտ էր, որովհետև կապերը գրաբարում գերազանցապես դրվում էին կապվող բառից առաջ, ինչպես՝ «վասն մարդոյ», «առանց նենգութեան» «ընդ աշակերտս», «ի վերայ երկրի» և այլն [2] : Աշակերտն առաջին հերթին պիտի ըմբռնի այս խոսքի մասի դերն ու նշանակությունը լեզվում: Դասն առավել արդյունավետ դարձնելու համար կարելի է օրինակները ներկայացնել պաստառներով կամ սահիկաշարով: Սկզբում ուսուցիչը պետք է բերի օրինակներ: Ցանկալի է, որ դրանք լինեն գեղարվեստական գրականությունից, որպեսզի աշակերտը կարողանա հասկանալ նաև, թե ինչ նպատակով են կապերը գործածվում գեղարվեստական գրականության մեջ: Քանի որ կապը նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է, ոճական սահմանափակ երանգավորում ունի: «Կապերի արտահայտչական հնարավորությունները բավականին համեստ են. դրանք հաճախ դրսևորվում են իրենց բնորոշ շարադասության խախտմամբ, կապի կրկնությամբ, ինչպես նաև որևէ հոլովաձևի կապով և առանց կապի ձևերի զուգորդությամբ, որոնք, ի հայտ գալով որպես հոմանիշներ, թույլ են տալիս ընտրություն կատարել և տվյալ համատեքստի համար կիրառել առավել արտահայտչական ձևը» [3] :

Բերենք օրինակ Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից:

Սարի հովի պես ամպերի փեշով
Արծրվի թևին զարկեմ ու երթա՛մ.
Ջինջ աղբյուրի պես դալուկ անտառով
Չոր տերևները գրկեմ ու երթա՛մ...

---

2 Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ304:
3 Տե՛ս Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992, էջ269:

Աշակերտը պիտի իմանա , որ կապը և այն բառը, որի հետ գործածվում է (կապվող բառ), միասին դառնում են նախադասության մեկ անդամ և պատասխանում են մեկ հարցի: Առանձին որևէ հարց չի ստանում:

Դրանք լեզվում կատարում են գրեթե նույն դերը, ինչ հոլովական վերջավորությունները: Հենց դրանով է պայմանավորված, որ կապերը գործածության մեծ հաճախականություն ունեն:

Օրինակ՝

Գիրքը դրված է սեղանին (սեղանի վրա):

Պատմում էին դրվագներ անցյալից (անցյալի մասին):

Նրա կարծիքով (ըստ նրա կարծիքի) աշխատանքը կարելի է ավարտել երեք օրում:

Նմանատիպ օրինակներ ուսուցիչը գրում է գրատախտակին, իսկ աշակերտները համապատասխան հոլովաձևերն արտահայտում են կապային կառույցով՝ միաժամանակ համոզվելով, որ ոչ բոլոր դեպքերում կարելի է հոլովով արտահայտել, և կապի գործածությունն անխուսափելի է (**նախքան** վերադառնալը, տոնի **առթիվ**, երկու երկրների **միջև**, իր նախաձեռնության **շնորհիվ** և այլն): Ուշադրություն են դարձնում նաև այն բանին, թե ինչ դիրք են գրավել կապերը կապվող բառի նկատմամբ:

Դրանք կարող են դրվել կապվող բառից առաջ՝ նախադրություններ (**առանց, դեպի, ըստ, ի հեճուկս, իբրև, որպես, հանուն, նախքան** և 6 այլն), կապվող բառից հետո՝ հետադրություններ (**առթիվ, առջև, դեմ, զատ, ի վեր, համար, հետ, մասին, նման, պես, վրա, տակ** և այլն) , կապվող բառից թե՛ առաջ, թե՛ հետո՝ երկդրություններ (**բացի, ընդդեմ, հանդեպ, շնորհիվ**):

Օրինակ՝ առանց քեզ, ըստ օրենքի, որպես մարդ, հանուն հայրենիքի քո առջև, տոնի առթիվ, հոր նման, սեղանի տակ նրանից բացի – բացի նրանից, քո շնորհիվ – շնորհիվ քեզ

Պետք է աշակերտների ուշադրությունը բևեռել այն փաստի վրա, որ մեր թվարկած կապերի մեջ կան և՛ պարզ կապեր՝ պես, մասին, շնորհիվ, և՛ բարդ կապեր՝ կցական (ընդդեմ, նախքան) և հարադրավոր (ի հեճուկս, ի վեր):

Հայ լեզվաբանների մեծ մասը կապերը բաժանում է երեք խմբի՝ իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր: Իսկական են միշտ որպես կապ հանդես եկող և չհոլովվող բառերը:

Օրինակ՝ դեպի, մասին, բացի և այլն:

Անիսկական են որպես կապ գործածվող, սակայն հոլովվող բառերը, օրինակ՝ **վրա-վրայից, վրայով, մոտ-մոտից, մոտով** և այլն: Կապական են այն բառերը, որոնք այլ խոսքի մասի են պատկանում, բայց կարող են գործածվել նաև կապական արժեքով:

Օրինակ՝ «Ժամանակը (գոյական) արագ էր անցնում», «Վազքի ժամանակ (կապ) ոտքը վնասեց»:

Այս բաժանումը հիմնական դպրոցի դասագրքում արված չէ, սակայն կարծում ենք, որ աշակերտներին այս բաժանումը ավելի ճիշտ կկողմնորոշի, քանի որ հաճախ է հարց առաջանում, թե ինչպես կարող է կապը բնութագրվել որպես չթեքվող խոսքի մաս, այնուհետև հոլովվել:

Կարևոր է նաև իմանալ, որ բազմաթիվ բառեր կարող են հանդես գալ որպես կապ և ածական, կապ և մակբայ, կապ և գոյական, ինչպես՝ նման կարծիքներ (ածական) – եղբոր նման (կապ) առաջ գնալ (մակբայ) – լուսամուտի առաջ (կապ) չափ պահել (գոյական) – ամպի չափ (կապ):

Այս տարբերությունը աշակերտը կարող է հասկանալ նախադասության մեջ: Եթե տվյալ բառը նախադասության մեջ առանձին է պաշտոն կատարում, առանձին է հարց ստանում, ապա այլ խոսքի մաս է: Եթե տվյալ բառը առանձին պաշտոն չունի, հարց է ստանում ինչ-որ բառի հետ, ուրեմն կապ է:

Օրինակ՝

Սեղանը դրված է դռան մոտ: - որտե՞ղ է դրված /կապ/

Մոտ օրերս կհանդիպենք: - ո՞ր օրերը / ածական/

Պետք է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք կառնչվեն կապի ճիշտ գործածությանը:

Օրինակ՝ հաճախ են շփոթում հետևյալ ձևերը. փոխարեն կամ փոխանակ պատճառով կամ շնորհիվ, ի շնորհիվ կամ շնորհիվ հետևանքով կամ շնորհիվ:

1.2. Կապերի հոլովառությունը, կետադրությունը

Այստեղ մեր հիմնական նպատակն այն է, որ աշակերտը կարողանա գրավոր և բանավոր խոսքում ճիշտ կիրառել կապերը՝ հատկապես ուշադրություն դարձնելով անձնական դերանունների հետ դրանց գործածությանը: Կարելի է կատարել շարքերով աշխատանք, որ աշակերտներն իրենք անեն որոշակի եզրահանգումներ՝ գտնելով այն կապերը, որոնց հետ կապակցվող բառը դրվում է որոշակի հոլովով:

Սեռական հոլովի հետ– **առջև, մասին, համար, վերաբերյալ, մոտ, վրա, չափ** և այլն:

Տրական հոլովի հետ – **առանց, հանուն, չնայած, համաձայն, կից** և այլն:

Հայցական հոլովի հետ - **առ, դեպի, մինչև, իբրև, ի վեր, ի վար** և այլն:

Բացառական հոլովի հետ – **բացի, զատ, վերև, ներքև, անկախ** և այլն:

Գործիական հոլովի հետ – **հանդերձ, մեկ (տնով մեկ)**:

Ներգոյական հոլովի հետ կապեր չեն դրվում:

Այստեղ ևս մեկ անգամ աշակերտների ուշադրությունը բևեռել այն փաստի վրա, որ ներգոյական հոլովի իմաստը կարելի էր արտահայտել սեռական հոլով + մեջ կապ ձևով՝ մարդու մեջ: Այնուհետև սահիկաշարի միջոցով ուսուցիչը պետք է ներկայացնի այն 11 կապերը (**մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, նման, հօգուտ, հանձին, ի դեմս, հանուն**), որոնց հետ առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները դրվում են տրական հոլովով՝ հակադրելով դրանք գոյականներին.

ընկերոջ հետ հմմտ. ինձ հետ
սեղանի մոտ հմմտ. քեզ մոտ
հայրենիքի համար հմմտ. մեզ համար

Ինչպես գիտենք, կապերի մեծ մասը տրոհում չի պահանջում: Կան տրոհման միայն մի քանի դեպքեր, որոնք ներկայացվում են աշակերտներին՝ հիմնավորելով համապատասխան օրինակներով:

1. **Բացի** քեզանից, ոչ ոքի չեմ ճանաչում: Ոչ ոքի չեմ ճանաչում, **բացի** քեզանից: Այստեղ ստորակետի փոխարեն կարելի է բութ դնել կամ ընդհանրապես չտրոհել:
2. **Ըստ, համաձայն, նայած, չնայած, հակառակ** կապերով ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից սովորաբար տրոհվում են միջադաս դիրքում ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բութով:

https://youtu.be/tuQ_FBlfIoc



ԳԼՈՒԽ 2 ՇԱՂԿԱՊ: ՇԱՂԿԱՊԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

2.1. Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները

Ինչպես արդեն նշել ենք, քերականական խոսքի մասերից է նաև շաղկապը: Այս խոսքի մասի ուսուցումը առավել դյուրին է, քանի որ ցածր դասարաններից սկսած որոշակի անդրադարձ կատարվում է: Աշակերտն առաջին հերթին պիտի կարողանա ըմբռնել շաղկապի դերը լեզվում, նշանակությունը և գործածությունը: Առաջին հերթին պիտի հասկանա , որ եթե կապը, դրվելով որևէ բառի վրա, ձևավորում է նրա շարահյուսական պաշտոնը, ապա շաղկապի դերն այլ է: Պարզ նախադասության կազմում դրանք կապում են նախադասության համազոր անդամներ,
օրինակ՝ «Արտակը և Սուրենը գրեցին», կամ՝ «Թե՛ ծառեը, թե՛ ծաղիկները ծաղկել են» և այլն: Շաղկապների գործածության հիմնական ոլորտը բարդ նախադասությունն է: Այն իրար է կապում տարբեր բնույթի նախադասություններ, օրինակ՝ Արևը ծագեց, և շրջապատը ողողվեց լույսով: Մենք կմեկնենք, եթե դու գաս: Նա հոգնած էր, քանի որ շատ էր աշխատել:

Նմանատիպ օրինակներ են բերում նաև աշակերտները, որից հետո փորձում են պարզել, թե ինչ տարբերություն կա և - ով և եթե - ով կապակցված նախադասությունների միջև: Պարզ է, որ առաջինը կապել է նախադասություններ, որոնք համազոր են, քերականորեն կախված չեն մեկը մյուսից, իսկ եթե շաղկապով կապակցված նախադասությունը քերականորեն կախված է մյուսից: Ըստ այդմ էլ ներկայացնում ենք շաղկապների տեսակները՝ օգտվելով սահիկաշարից: Այնուհետև համադասական և ստորադասական շաղկապներից պետք է խմբեր առանձնացնել՝ ըստ կիրառության.

Մենադիր – միայնակ գործածվող շաղկապներ՝ «Մութն ընկավ, և բոլորը ցրվեցին»:

Կրկնադիր – կրկնվող շաղկապները՝ «Ո՛չ կարող էին առաջ շարժվել, ո՛չ վերադառնալ»:

Զուգադիր – որոշակի զույգերով գործածվող շաղկապները՝ «Թեև հիվանդ էր, սակայն եկել էր»

Շատ կարևոր է, որ աշակերտները կարողանան գտնել շաղկապների հարաբերակցություններն այլ խոսքի մասերի հետ և կազմելով նախադասություններ՝ ցույց տան տարբերությունները:

Օրինակ՝

այլ – շաղկապ, անորոշ դերանուն

էլ – շաղկապ, մակբայ

ապա – շաղկապ, մակբայ

փոխանակ – շաղկապ, կապ

չնայած – շաղկապ, կապ

Փոխանակ ուրախանաս, տխրել ես: հմմտ. Փոխանակ ուրախանալու՝ տխրել ես:

Նա էլ դավաճանեց հայրենիքին: հմմտ. Էլ չեմ խոսի այդ մասին:

Եթե մեծը համեստ էր, ապա փոքրը փոքր-ինչ ամբարտավան էր : հմմտ. Սկզբում մոտեցավ, ապա ներկայացավ:

Այստեղ կարելի է նաև հետաքրքրաշարժ նյութ հաղորդել մի քանի շաղկապների առաջացման մասին: Որ շաղկապը, օրինակ, առաջացել է որ դերանունից, որը գրաբարում շաղկապական գործածություն չուներ: «Հայտնի է, որ կամ շաղկապն առաջանում է կամ բառից, որը գրաբարում հավասարապես նաև գոյական էր, իսկ շաղկապը՝ իսկ բառից, որը գրաբարում հավասարապես նաև ածական ու գոյական էր» [4] :

Ինչպես վերևում արդեն նշել ենք, դասի ընթացքում գեղարվեստական գրականությունից օրինակներ բերելը արդյունավետ է ոչ միայն տվյալ նյութի ուսումնասիրության համար, այլև գեղագիտական ճաշակ է զարգացնում, օգնում է

գրողի ասելիքն ավելի համակողմանիորեն ըմբռնել: Շաղկապի գործածության դեպքեր շատ են հանդիպում Թումանյանի, Սահյանի ստեղծագործություններում: Հովի. Թումանյանի քառյակներից մեկում շաղկապների գործածությունը յուրահատուկ ոճական երանգ է հաղորդում, ստիպում աշակերտին խորհել: Ցույց է տալիս հեղինակի անհանգիստ բնավորությունը, հոգու երկվությունը.

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ է՞ս, թե՞ էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս, թե՞ էն
Աստված ինքն էլ տարակուսած չի հասկանում՝ ինչ անի,
Տանի՛, թողնի՛, ո՞րն է բարին, որ սահմանում, է՞ս, թե՞ էն:

Շաղկապի գործածությամբ Հ. Սահյանը իր ստեղծագործություններից մեկում փորձում է յուրահատուկ տրամադրություն հաղորդել.

Ու բախվեցինք մեկմեկու,
Ու հեռացանք մշտապես,
Եվ չիմացանք թե ինչու՞,
Եվ չիմացանք թե ինչպե՞ս:

---

[4] Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977, էջ 261:

2.2. Շաղկապների կազմությունը, ուղղագրությունն ու կետադրությունը

Շաղկապների կազմությունն ուսումնասիրելու համար կարելի է աշխատել շարքերով: Շարքերից մեկի աշակերտները գրում են շաղկապները և փորձում ինքնուրույն դասակարգել՝ ըստ կազմության՝ պարզ , բարդ, ածանցավոր՝ բերելով օրինակներ:

Երկրորդ շարքի աշակերտներն առանձնացնում են այն բարդ շաղկապները, որոնց բաղադրիչները գրվում են միասին՝ այլև, նաև, այսինքն, թեև, որպեսզի, և այն շաղկապները, որոնց բաղադրիչները գրվում են անջատ՝ ոչ միայն, քանի դեռ, քանի որ, հենց որ, միայն թե, ոչ միայն և այլն:

Երրորդ շարքի աշակերտները բացատրում են այս բառերի ուղղագրությունը:

Շաղկապի կետադրությունը յուրացնելը աշակերտների համար դյուրին է, քանի որ, ինչպես բազմիցս նշել ենք, դեռ ցածր դասարաններից նրանք գիտեն, որ շաղկապից առաջ պիտի դրվի ստորակետ:

Օրինակների միջոցով պիտի հանգամանալից բացատրվի միայն այն դեպքը, թե երբ է ստորակետ դրվում և, ու, կամ շաղկապներից առաջ: Օրինակները կարելի է ընտրել գեղարվեստական գրականությունից.

«Թևեր առած թռավ-եկավ նա արքայանիստ քաղաքը, և ծայր տվին խնջույքներն ու գինարբուքները օրեր ու գիշերներ»,

«Երբեմն ծովն էր մրրկում նրա գուշի մեջ, և դողդոջուն լարերը ալիքների պես լեռնանում էին ու շառաչում» (Ավ. Իսահակյան):

Կարևոր է նաև զուգադիր շաղկապների կետադրության ուսուցումը, որն ավելի պատկերավոր լինելու համար ներկայացվում է սահիկաշարով: 12

Աշակերտներն ինքնուրույն կազմում են նախադասություններ, գրում գրատախտակին, այնուհետև կետադրում:

Գործնական աշխատանք

Տրված տեքստից դուրս գրել 2 շաղկապ

- Տղաներից մեկն առաջարկում է պահել, և Կոստանդը ուզում ինչ-որ բան ասել, բայց սպիտակ ձին հասկանում է դա ,և խոսքը կիսատ է մնում: Գյուղացիները տեսնում են սպիտակ ձիու ամեհի ոստյունը: Հրեղեն ձի են անվանում նրան

2 բոպեում խմբավորիր տրված կրկնադիր,մենադիր և զուգադիր համադասական շաղկապները և կազմիր գծապատկեր

- *բայց և այնպես, կամ թե, ոչ միայն. . . այլև, և, ու, էլ, նաև, կա՛մ. . . կա՛մ, ոչ միայն. . . այլ նաև, այսինքն, բայց, ո՛չ. . . ո՛չ, է՛լ. . . է՛լ, և՛. . . և՛, ոչ թե. . . այլ, այսինքն, բայց և , և կամ*

ՍԱՀԻԿԱՇԱՐ


Ընդհանուր իմաստը՝ քերականական իմաստ
Զևաբանական առանձնահատկությունը՝ չթեքվող
Շաղկապ
Տեսակները՝ համադասական, ստորադասական
Շարահյուսական դերը՝ նախադասության անդամ չի դառնում ,բառեր նախադասություններ է կապակցում

Եզրակացություն

Իմ ուսումնասիրության մեջ արծարծված հարցերը, դրանց հիման վրա կատարած ընդհանրացումները առանց մանրամասնելու կարելի է ամփոփել հետևյալ կերպ:

Քերականական խոսքի մասերի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի,քանի որ նպաստում է գրավոր և բանավոր խոսքի ճիշտ կառուցմանը, հաղորդակցման գործընթացում դրանց ճիշտ գործածությանը: Ուսումնասիրության ընթացքում եկա այն եզրակացության, որ հատկապես պետք է ուշադրություն դարձնել կապի ուսումնասիրությանը, քանի որ միջին դպրոցում դրան առաջին անգամ է անդրադարձ կատարվում: Կարևորվում է կապի հոլովառությունը, որը նպաստում է ճիշտ խնդրառության կառուցմանը, ինչի շնորհիվ էլ խոսքը դառնում է դիպուկ ու ճշգրիտ: Գրավոր խոսքը առավել գրագետ դարձնելու համար հատուկ ուշադրություն պետք է դարձնել կապի և շաղկապի ուղղագրությանը:

Գիտելիքների կայուն և գիտակցական յուրացումը, աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացումը և ուսուցման պրոցեսի ակտիվացումը ապահովվում են միայն այն ժամանակ, երբ աշակերտները, ստանալով ուսուցչից ելակետային, կողմնորոշ առաջադրանքներ և հենվելով իրենց իմացածի, փորձի ու ունակությունների վրա, նյութը ըմբռնում են ինքնուրույնաբար: Այս է կարևորը: Նման եղանակով գիտելիքները ձեռք են բերվում աշակերտների մտածական ու հոգեկան պրոցեսների համատեղ գործունեության շնորհիվ և դառնում նրանց համոզմունքը: Ուսուցումը նման ձևով վարելիս աշակերտները լեզվական գիտելիքներն ստանում են ոչ պատրաստի դատողությունների ու եզրահանգումների ձևով, այլ ձեռք են բերում իրենց մտավոր գործունեության շնորհիվ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. , Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975:

2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 14 1970:

3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977:

4. Ավետիսյան Յու..,Զաքարյան Հ., Հայոց լեզու, Երևան, 2012:

5. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992:

6. Սարգսյան Ա., Ժամանակակից հայերենի համառոտ ուղեցույց, Երևան, 2004:

7. Բ.Ռ.Սարուխանյան/ Կապերի և կապական բառերի ուսուցումը միջնակարգ դպրոցում, Երևան, 1977

8. «Հայոց լեզու և գրականութուն» ամսագիր, Երևան, 2005

9. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան- Հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 2008